**Գավառի պետական համալսարանի**
**ռազմավարական ծրագրի իրականացման 2023-2024 ուսումնական տարվա**
**գործողությունների ծրագիր**

| h/h | Նպատակը | Գործողությունները | Ժամկետը | Պատասխանատու ստորաբաժանումները /պատասխանատուները/ | Ռեսուրսները | | Հնարավոր խոչընդոտները | Արդյունավետության ակնկալվող գնահատման ցուցչիները |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Առկա | Պահանջվող | | |
| | | | I. ***ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*** | | | | | |
| 1. | Կրթության որակի ապահովման ներքուհական համակարգի շարունակական բարելավում՝ որակի ապահովման կառուցակարգերի հստակեցում, շահակիցների ներգրավում որակի ապահովման գործընթացում, կրթության որակի մշտադիտարկման նոր մեթոդների և գործիքակազմի կիրառում, ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին, կրթության որակի ապահովման համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում: Համալսարանի ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացի տարեկան և միջնաժամկետ ծրագրերի կատարման մշտադիտարկում, համապատասխան արդյունքների ներկայացում | 1.1.ԳՊՀ կրթության որակի ապահովման ձեռնարկի բարելավում, նրանում ամրագրված ԳՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականության նպատակների և խնդիրների հստակեցում: ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացների համադրելիության ապահովում Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (ԵԲԿՏ) որակի ապահովման գործընթացներին,<br>1.2.ԳՊՀ ՈԱ բոլոր գործընթացների համար «ՊԻԳԲ» շրջափուլի իրականացման գործողությունների վերանայում, բարելավում:<br>1.3.ԳՊՀ կրթության որակի ապահովման ընթացակարգերն իրականացնելու համար մշակել գործողությունների պլան՝ սահմանված ժամանակացույցով, պատասխանատուներով և գնահատման արդյունավետության ցուցիչներով:<br>1.4.Մշակել կրթության որակի ապահովման երկարաժամկետ, միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների մշտադիտարկման պլաններ:<br>1.5. ԳՊՀ կրթության որակի ապահովման գործընթացներում գործատուների և շրջանավարտների ներգրավում, համատեղ քննարկումների, նիստերի անցկացում:<br>1.6.ԳՊՀ կրթության որակի ապահովման գործընթացները գնահատելիս, վերլուծություններ իրականացնելիս օգտագործել որակական և քանակական ցուցիչներ /գործընթացի բլոկ սխեմաներ, գրաֆիկներ, Պարետոյի վերլուծություն, | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, Որակի ապահովման բաժին (ՈԱԲ), Ակադեմիական քաղաքականության բաժին (ԱՔԲ) | ԳՊՀ-ում ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական, լաբորատոր, գրադարանային, ուսումնամեթոդական բավարար բազա: Հարցախույզերի իրականացման գործող համակարգ | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | ՀՀ Գեղարքունիքի մարզից բնակչության արտագաղթի բարձր ցուցանիշներ, դիմորդների քանակի նվազում. ուսանողների ընտանիքների սոցիալական անապահովության բարձր աստիճան և ցածր վճարունակություն | 1. 1. Եվրոպական որակավորումների ոլորտային շրջանակին, ՀՀ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչներին համադրելի վերջնարդյունքահեն մասնագիտական կրթական ծրագրեր,<br>1.2. Գավառի պետական համալսարանի իրականացրած կրթական և սոցիալ-մշակութային ծրագրերի արդյունավետությունից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Որակի ապահովման ազգային կենտրոն: | վերլուծության տարրերի վերհանման դիագրամ (fish-bone diagram), կետային դիագրամներ, գնահատման թերթիկներ, վերահսկիչ գրաֆիկ (control charts), մտագրոհ, բենչմարքինգ, ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն/:<br>1.7. Վերլուծությունների արդյունքում խնդիրները վերհանելիս դրսևորել քննադատական մոտեցում, կազմակերպել նպատակային քննարկումներ ու հարցազրույցներ թիրախային խմբերի հետ, մշակել բարելավման ուղիներ: | | | | | |
| 2. | Ուսանողների ուսումնական, արտադրական, մանկավարժական, նախաավարտական և այլ տեսակի պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում՝ կիրառելով աշխատանքի վրա հիմնված կրթության մեթոդներ: | 2.1. Վերանայել ԳՊՀ և գործընկեր հաստատությունների միջև կնքված պայմանագրերը, գործունեության ոլորտները:<br>2.2. Վերանայել ԳՊՀ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի բակալավրիատի և մագիստրատուրայի պրակտիկաների ծրագրերը, իրականացման ժամկետները, ուսանողների և պրակտիկայի ղեկավարների պարտականություններն ու իրավասությունները:<br>2.3.ԳՊՀ ՈԱԲ-ի կողմից իրականացվող հարցումների միջոցով գնահատել ԳՊՀ պրակտիկանտ-ուսանողների և գործատուների բավարարվածությունը պրակտիակների կազմակերպման գործընթացից:<br>2.4. Գնահատման արդյունքների հիման վրա վերանայել ու բարելավել մասնագիտական կրթական ծրագրերը, նրանցում ամրագրված վերջնարդյունքները, ուսուցման մեթոդաբանությունը, ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը, տեղեկատվական համակարգերի հասանելիությունը, Գործատու-Համալսարան փոխհարաբերությունները, կրթական ծրագրերի վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվության արժանահավատությունը: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՄԿԾ-ների ղեկավարներ, ՈԱԲ, ԱՔԲ | ԳՊՀ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի բակալավրիատի և մագիստրատուրայի պրակտիկաների ծրագրերի առկայություն, ԳՊՀ- գործատու պայմանագրերի առկայություն: Հարցախույզերի իրականացման գործող համակարգ: | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | ԳՊՀ արտաքին և ներքին շահակիցների ոչ բավարար շահադրդումը | 2.1. Գործատուների հետ վերանայված և կնքված նոր պայմանագրեր:<br>2.2. Վերանայված և բարելավված մասնագիտական կրթական ծրագրեր,<br>2.3.ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական իրազեկություններից գործատուների գոհունակության մակարդակի բարձրացում,<br>2.4. ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | Բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ուսումնասիրում, ուսանողների մոտ հետազոտական, վերլուծական հմտությունների և կարողությունների զարգացում: | 3.1. Բակալավրիատի բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններում «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի ներառում:<br>3.2. «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի դասավանդման, գնահատման արդյունավետությունից բակալավրիատի ուսանողների բավարարվածության գնահատում, գնահատման արդյունքների հիման վրա դասընթացի բարելավում, նրանում ամրագրված վերջնարդյունքների, դասավանդման և գնահատման մեթոդների վերանայում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՄԿԾ-ների ղեկավարներ, ՈԱԲ, ԱՔԲ | Նախորդ ուսումնական տարիներին դասավանդվող «Գիտական հետազոտության մեթոդաբանությու ն» դասընթացի դասավանդման փորձ: Հարցախույզերի իրականացման գործող համակարգ: | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերն եր չկան | 3.1. Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի դասավանդման, գնահատման արդյունավետությունից բակալավրիատի ուսանողների բավարարվածության գնահատման վերլծություն, վերանայված և արտաքին գնահատում ստացած՝ դասընթացի ծրագիր:<br>3.2. «Հետազոտության մեթոդաբանություն» դասընթացի դասավանդման որակից ուսանողների բավարարվածության աստիճան: |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում, դրանցում ամրագրված հրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին՝ հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը: | 4.1.Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում, դրանցում ամրագրված հրազեկությունների՝ գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանեցում ՀՀ Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, աշխատաշուկայի արդի պահանջներին, ԵԲԿՏ որակավորումների համընդհանուր շրջանակին, հաշվի առնելով «կանաչ կրթության» սկզբունքը՝ ըստ ՈՈՇ-ների վերջնարդյունքների, իրականացնել կրթական ծրագրերի արդիականացում, ՄԿԾ-ների մասնագրերի լրամշակում, արտաքին գնահատում:<br>4.2.Վերանայել մասնագիտական կրթական ծրագրերի առանձին կառուցամասերի (Ա.Բ.Գ) վերջնարդյունքները, ամրապնդել կապը ինչպես միմյանց, այնպես էլ ՀՀ ՈԱՇ-ի բնութագրիչների միջև: Վերջնարդյունքների երեք խմբերի միջև ապահովել տրամաբանական կապ, դրանք հնարավորինս հստակ ձևակերպել և չափելի դարձնել:<br>4.3.Վերջնարդյունքահենն ՄԿԾ-ների իրականացումից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճի ապահովում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՄԿԾ-ների ղեկավարներ, ՈԱԲ, ԱՔԲ | Համապատասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերներ չկան | Իրականացվող բոլոր ՄԿԾ-ների հաստատված նոր մասնագրեր՝ սահմանված վերջնարդյունքներով |
| 5. | ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման համակարգի և թեստավորման գործող ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, զուգահեռաբար էլեկտրոնային նոր համակարգերի մշակում և | 5.1.ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման http://learn.gsu.am/ համակարգի և թեստավորման https://exam.gsu.am/ ծրագրի համալրում ուսումնական նոր նյութերով, թեստերով, զուգահեռաբար էլեկտրոնային նոր համակարգերի մշակում և շահագործում:<br>5.2. Մասնագիտական բոլոր կրթական | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ՄԿԾ-ների ղեկավարներ, լաբորանտներ,դասախոսներ, ՈԱԲ, ԱՔԲ | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերներ չկան | Նոր էլեկտրոնային ուսուցման ռեսուրսներ, շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | շահագործում՝ ՄԿԾ-ների, ուսումնական մոդուլների, ուսումնամեթոդական տարաբնույթ նյութերի, դասախոսությունների առցանց մատուցման նպատակով, ինչպես նաև ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացում էլեկտրոնային գործիքների կիրառում: | ծրագրերի բակալավրիատի և մագիստատուրայի քննական և ստուգարքային տեղեկագրերի թվայնացում:<br>5.3.Դասախոսությունների տեսաձայնագրման հարթակի ստեղծում, շարունակական համալրում:<br>5.4. ԳՊՀ էլեկտրոնային ռեսուրսներից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության գնահատում:<br>5.5.Գնահատման արդյունքերի հիման վրա Համալսարանի էլեկտրոնային ռեսուրսների հաշվառում, բարելավում: | | | | | |
| 6. | Ուսանողների և դիմորդների համար ՄԿԾ-ների նկարագրերի վերաբերյալ ուղեցույցների մշակում և հրապարակում: | 6.1. Բակալավրիատի և մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) բարելավում, արդիականացում:<br>6.2. Դիմորդների համար մասնագիտական կողմնորոշման դասընթացների կազմակերպում և իրականացում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ՄԿԾ-ների ղեկավարներ, ՈԱԲ, ԱՔԲ, ՈւԳԸ, ՈւԽ | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերներ չկան | Ուսանողների և դիմորդների համար ՄԿԾ-ների նկարագրերի վերաբերյալ նոր ուղեցույցների առկայություն:<br>ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |
| ***II. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*** | | | | | | | |
| 1. | Համալսարանի գիտահետազոտական գործունեության կառավարման հստակ քաղաքականության իրականացման ուղղությամբ՝ սահմանված ընթացակարգերի դրույթների պահպանմամբ արդյունավետ աշխատանքների ապահովում: | 1.1. Լրամշակել և արդյունավետ գործարկել ԳՊՀ-ում հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խրախուսող կարգերն ու գործիքակազմը:<br>1.2. Ուսանողների շրջանում իրականացնել գիտության և գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բարձրացման ծրագրեր: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ | Համապատասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր:<br>Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի առկայություն: | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերներ չկան | 1.1.ԳՊՀ-ում հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող վերանայված ներքին իրավական ակտեր:<br>1.2. ԳՊՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ուսանողների բավարարվածության աստիճանի աճ:<br>1.3. Ուսանող-դասախոս համատեղ հետազոտություններ, |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | ուսումնական և հետազոտական գործընթացների փոխկապակցվածությա ն արդյունավետության գնահատման վերլուծություններ: |
| 2. | Գավառի պետական համալսարանի 2023-2027 թվականների գիտահետազոտական գործունեության շրջանակի սահմանում: | 2.1. «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գիտահետազոտական, նորարարական գործունեության գերակա ուղղության միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկել արդյունավետության ցուցիչների կատարողականը, վերլուծել դրանց շեղումները և պատճառները:<br>2.2. Գիտական գործունեության արդյունավետության գնահատման նոր համակարգի մշակում և ներդնում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: Համապատասխա ն փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերն եր չկան | Պլանավորված հետազոտական գործունեություն |
| 3. | ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջների համապատասխանեցում ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին: | 3.1. ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի տեխնիկական պահանջների վերանայում, համապատասխանեցում ՀՀ Բարձրագույն որակավորումների կոմիտեի կողմից ընդունելի պարբերականների համար նախատեսված պահանջներին:<br>3.2. Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված հանդեսների տեխնիկական և բովանդակային պահանջների ուսումնասիրում, դրանց հաշվառում ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բովանդակային և տեխնիկական պահանջները սահմանելիս: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ | Համապատասխա ն փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերն եր չկան | Ազգային և միջազգային շտեմարաններում ընդգրկված գիտական հանդեսներում տպագրություններին ներկայացվող պահանջներին համատասխան ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուներ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցների ներգրավում և ԳՊՀ գրադարանային պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում: | 4.1.Ըստ համապատասխան ոլորտների՝ գիտահետազոտական նախագծերի մշակում, իրականացում՝ դրամաշնորհային մրցույթներին ներկայացնելու նպատակով: 4.2.Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի ֆինանսական միջոցների ներգրավում և ԳՊՀ գրադարանային պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրում, ենթակառուցվածքների բարելավում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հաշվապահություն, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին | Աշխատանքներն ընթացքի մեջ են | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Մարտահրավերն եր չկան | Միջազգային նոր ծրագրերին անդամակցություն |
| 5. | ԳՊՀ ներքին և արտաքին շահակիցներին ‹‹Բաց գիտության›› համակարգի բաղադրիչների սկզբունքներին և կանոններին ծանոթացում, լրացական դասընթացների կազմակերպում, գիտահետազոտական համապատասխան ոլորտի անհրաժեշտ իրազեկություններով օժտված փորձագետների ներգրավմամբ: | 5.1. ‹‹Բաց գիտություն›› համակարգի բաղադրիչների աստիճանական ներդրում, գիտահետազոտական աշխատանքների հրապարակում հղման բարձր գործակից ունեցող պարբերականներում, որոնք ներառված են Web of Science, Scopus, Crossref, РИНЦ և այլ համակարգերում: 5.2.«Բաց գիտությանն» աջակցող մեխանիզմների մշակում, որոնք կնպաստեն ԳՊՀ հետազոտողների մրցունակության ապահովմանը: 5.3.ԳՊՀ-ում ‹‹Բաց գիտության›› մշակույթի տարածում, հետազոտողների մոտ գիտական միջավայրի նկատմամբ վստահության ձևավորում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին | Աշխատանքներն ընթացքի մեջ են | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Մարտահրավերն եր չկան | ԳՊՀ-ում գիտական հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմի շրջանում անցկացված վերապատրաստումնե: ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունություն: |
| 6. | ՀՀ և օտարերկրյա բուհերի, գիտահետազոտական ինստիտուտների և մասնավոր կազմակերպությունների հետ համատեղ գիտահետազոտական դրամաշնորհային նախագծերի իրականացում: | 6.1. Ներքին և արտաքին գիտական հաղորդակցության (Science communication) ժամանակակից մեխազմների ներդրմամբ՝ պրոֆեսորադասախոսական կազմի հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացում: 6.2.Միջազգային գիտական, հետազոտական ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցության ապահովում և խրախուսում, նրանց գրանցում միջազգային ակադեմիական հարթակներում (Google Scholar, ORCID, ResearchGate, Publons, Elsevier, SSRN, HAL, Elibrary, Academic.edu, այլ): | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին | Աշխատանքներն ընթացքի մեջ են | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Մարտահրավերն եր չկան | Միջազգային նոր ծրագրերին անդամակցություն: Միջազգային գիտական, հետազոտական ծրագրերին համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցություն: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ***III. ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ, ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ*** | | | | | | | | |
| 1. | ԳՊՀ կառավարման իրավական հիմքերի կատարելագործում՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին համապատասխան: | 1.1. ԳՊՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների իրավասությունների և գործառույթների շրջանակների վերանայում՝ վերհանելով բարելավման կարիք ունեցող ոլորտները: 1.2.Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլանի մշակում և գործարկում, արդյունքների վերլուծություն, հրապարակում: 1.3. Մշտադիտարկման արդյունքների հաշվառմամբ բարելավման ծրագրերի մշակում և իրականացում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Ռեկտորատ, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, գիտական խորհուրդ, դեկաններ, ՈԱԲ: | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: Համապատասխա ն փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերն եր չկան | ԳՊՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների աշխատակիցների վերանայված գործառույթների շրջանակներ: 1.2.Գավառի պետական համալսարանի 2023-2027թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների տարեկան և միջնաժամկետ մշտադիտարկման պլան, արդյունքների վերլուծություն: |
| 2. | ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների առաջընթացը գնահատող կատարողականի արդյունքային ցուցանիշների (ԿԱՑ) համակարգի և դրանց արդյունքով խրախուսման համակարգ սահմանելու մեխանիզմի մշակում՝ ելնելով ՀՀ կրթության ազգային քաղաքականության և բուհի ռազմավարական առաջնահերթություններից: | 2.1.ԳՊՀ ներքին կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում: 2.2.Վիճակագրական և այլ տվյալների պարբերական մուտքագրում ներքին կառավարման համակարգ, վերլուծություն և հրապարակում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին, ուսումնագիտական գծով պրոռեկտոր, դեկաններ, ՈԱԲ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, ԱՔԲ: | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: Համապատասխա ն փորձի, ձևավորված մշակույթի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Աշխատակիցների լրացուցիչ ծանրաբեռնվածու թյուն | ԳՊՀ ներքին կառավարման նոր էլեկտրոնային տեղեկատվական համակարգի առկայություն: |
| 3. | Դասախոսների և ուսանողների համար անվտանգ կրթական միջավայրի ապահովում: | 3.1.ԳՊՀ ընդհանուր անվտանգության, մուտքի և ելքի վերահսկման համակարգերի բարելավում: 3.2.ԳՊՀ հանրակացարանում հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ապահովում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | ԳՊՀ ռեկտոր, Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, կառուցվածքային ստորաբաժանումնե րի ղեկավարներ: | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Մարտահրավերն եր չկան | ԳՊՀ-ում առկա անվտանգ և հասանելի սոցիալական, ֆիզիկական ու վիրտուալ միջավայր: |
| 4. | ԳՊՀ-ում կրթական նորարարությունների խթանման ծրագրերի մշակում՝ դիմելով միջազգային, հասարակական ու այլ | 4.1.ԳՊՀ ֆինանսական կայունության բարելավում՝ աստիճանաբար ավելացնելով ու բազմազանեցնելով ֆինանսական հոսքերը՝ օրենքով չարգելված աղբյուրներից: 4.2.ԳՊՀ ձեռնարկատիրական | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | ԳՊՀ ռեկտոր, Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, հաշվապահություն, ՄՌԿ, Արտաքին կապերի և | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | Մարտահրավերն եր չկան | ԳՊՀ ֆինանսական կայունություն: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ազգային և միջազգային կազմակերպություններին՝ ֆինանսական աջակցության նպատակով: | գործունեության և մասնավոր հատվածի հետ համագործակցության համար մեխանիզմների մշակում և գործարկում: | | լրատվության բաժին | | | | |
| 5. | ԳՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի մասնագիտական զարգացման դասընթացների մշակում և վերապատրաստումների իրականացում: | 5.1. Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումները պայմանավորել ՄԿԾ-ների դասավանդման համար առաջնահերթ կարիքներով՝ կարևորելով նաև արտաքին մասնագիտական վերապատրաստումները, ինչպես նաև միջազգայնացումը:<br>5.2.Շարունակել ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ակադեմիական շարժունության ծրագրերը: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, ՌԱԲ | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: | Անցկացվող սեմինարների, վերապատ րաստումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ | Ակնհայտ մարտահրավերնե ր չկան | Պրոֆեսորադասախոս ական կազմի մասնագիտական զարգացման վերապատրաստումներ ի իրականացված դասընթացներ: |
| 6. | ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի շարունակական մասնագիտական զարգացումը խթանելու նպատակով աշխատանքի վարձատրության և խրախուսման տարբերակման մեխանիզմների մշակում և ներդրում: | 6.1.Լրամշակել և արդյունավետ գործարկել ԳՊՀ-ում հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խրախուսող կարգերն ու գործիքակազմը:<br>6.2. ԳՊՀ տարեկան բյուջեում ավելացնել աշխատակիցների խրախուսմանը տրամադրվող հատկացումները: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՄԿԾ ղեկավարներ, ՌԱԲ | Համապա տասխան ԳՊՀ ներքին իրավական ակտեր: | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | ԳՊՀ ֆինանսական սուղ միջոցներ | ԳՊՀ-ում հետազոտական աշխատանքների կատարումը կանոնակարգող և խրախուսող լրամշակված կարգերի ու գործիքակազմի առկայություն: |
| 7. | ԳՊՀ ենթակառուցվածքների, մշակութային միջոցառումների և մարզական պարապմունքների դահլիճների վերանորոգում և կահավորում՝ համապատասխանեցնելով ներառականության պահանջներին: | 7.2.Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայրի, սննդի և հանրակացարանային պայմանների ապահովում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, հաշվապահություն, գնումների մասնագետ | Կատարվում են որոշակի աշխատանք ներ | Լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներ | ԳՊՀ ֆինանսական սուղ միջոցներ | Հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար մատչելի կրթական միջավայրի, սննդի և հանրակացարանային պայմանների առկայություն: |
| **IV. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ, ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** | | | | | | | | |
| 1. | Արտասահմանյան գործընկերների, միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում և ընդլայնում՝ | 1.1.Ապահովել միջազգային հետազոտական դրամաշնորհային նոր ծրագրերի մասնակցություն:<br>1.2.Ըստ համապատասխան ոլորտների՝ մշակել գիտահետազոտական նախագծեր, մասնակցել դրամաշնորհային մրցույթների:<br>1.3.Ազգային և միջազգային դրամաշնորհային ծրագրերի | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Արտաքին կապերի և լրատվության բաժին, Հաշվապահություն ԱՔԲ, ֆակուլտետի դեկաններ, ՄԿԾ-ների պատասխանատուն եր | Համագործակցայ ին ակտիվ կապեր ՀՀ գիտական, կրթական հաստատություննրի հետ, կնքված համագործակցույան հուշագրերի, պայմանագրերի | Ֆինանսական հավելյալ միջոցներ | Ոչ բավարար շահադրդում արտաքին շահակիցների շրջանում | 1.Միջազգային հետազոտական դրամաշնորհային նոր ծրագրերին մասնակցություն: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ֆինանսավորում ստանալու նպատակով: | ֆինանսական միջոցները ներգրավել ԳՊՀ նյութատեխնիկական պաշարների, լաբորատորիաների, համակարգչային լսարանների, մասնագիտական աշխատասենյակների հնարավորությունների համալրման, ենթակառուցվածքների բարելավման գործընթացներում: | | | առկայություն | | | |
| 2. | ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական պայմանների ապահովում և ծրագրերի իրականացում, խորհրդատվական ծառայությունների մատուցում: | 2.1.Համալսարանի եկամուտների, բարեգործական հիմնադրամների և այլ աղբյուրների հաշվին ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրերի իրականացում: Գործընթացից ապահովել ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Արտաքին կապերի և լրատվության բաժին, Հաշվապահություն ԱՔԲ, ֆակուլտետի դեկաններ, ՄԿԾ-ների պատասխանատուներ | Համագործակցային ակտիվ կապեր ՀՀ գիտական, կրթական հաստատությունների հետ, կնքված համագործակցության հուշագրերի, պայմանագրերի առկայություն | Ֆինանսական հավելյալ միջոցներ | Ոչ բավարար շահադրդում արտաքին շահակիցների շրջանում | ԳՊՀ-ում շարունակական մասնագիտական վերապատրաստման իրականացված ծրագրեր: Գործընթացից ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության աճ: |
| 3. | Միջազգային, այդ թվում՝ ԵԲԿՏ-ի միջբուհական համագործակցության, շարժունության, գիտահետազոտական և այլ ծրագրերին ԳՊՀ-ի ակտիվ մասնակցության խթանում: | 3.1. ԳՊՀ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի, վարչական աշխատակիցների ակադեմիական շարժունության ակտիվացում:<br>3.2.Արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին, սեմինարներին, վերապատրաստման դասընթացներին, շարժունության ծրագրերին ԳՊՀ աշխատակազմի մասնակցության ապահովում:<br>3.3.Փոխանակման ծրագրերում ներգրավված սովորողների համար ուսումնառության արդյունքների ճանաչման գործընթացի դյուրացում և կատարելագործում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի և լրատվության բաժին, ԱՔԲ, ՄԿԾ-ների ղեկավարներ: | Միջազգային ծրագրերին անդամակցության, դրանց իրականացման հաջողված փորձի առկայություն, գիտական ներուժի առկայություն | Ֆինանսական հավելյալ միջոցներ | ԳՊՀ ներքին շահակիցների ոչ բավարար շահադրդումը | Միջազգային նոր ծրագրերին անդամակցություն: |
| 4. | Ուսանողների կարիքների ուսումնասիրում՝ բացահայտելու նրանց ակնկալիքներն ու սպասումները կրթական և գիտահետազոտական ուղղություններով, դրանց բավարարման նպատակով ծրագրերի մշակում: | 4.1.Ուսանողական կառույցների կողմից ուսանողների կարիքների վերհանման ներդրված կառուցակարգերով աշխատանքներ տանել սովորողներին կրթության բովանդակության ձևավորման ու բարելավման, ՄԿԾ-ների վերանայման, բուհի գործունեության տարբեր ոլորտների արդյունավետության գնահատման, համալսարանի ամենամյա ինքնավերլուծության, ուսանողների փոխատեղման, սովորողներին անվանական կրթաթոշակների | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Համալսարանի ռեկտորատ, ՈւԽ և ՈւԳԸ, դեկանատներ, ՄԿԾ-ների պատասխանատուներ, ՈԱԲ, ԱՔԲ, Արտաքին կապերի և լրատվության բաժին: | Որակի մշակույթի առկայություն | Ֆինանսական հավելյալ միջոցներ | Ուսանողների հասարակական ակտիվության պակաս | Գործընթացից ներքին շահակիցների բավարարվածության աճ: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ներկայացման և այլ գործառույթներում ներգրավելու նպատակով, նրանց մասնակցությամբ ստեղծել ֆակուլտետային և համալսարանական հանձնաժողովներ: 4.2.Ուսանողական թիրախային խմբերի, այդ թվում՝ Արցախից բռնի տեղահանված ուսանողների շրջանում հարցումների անցկացում՝ կրթական գործընթացում նրանց հանդիպած խնդիրների բացահայտման և լուծման, աջակցության ծրագրերի իրականացման նպատակով: | | | | | | |
| 5. | Միջազգային գիտաժողովների կազմակերպում: | 5.1. Գործընկեր բուհերի հետ համատեղ պլանավորվել և իրականացնել միջազգային գիտաժողովներ: 5.2.Օտարերկրյա գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ պայմանագրերի հիման վրա հետազոտական ծրագրերի իրականացում: 5.3. Շարունակել ՈՒԽ և ՈՒԳԸ գործունեության ակտիվացման աշխատանքները գիտաժողովներին մասնակցության ակտիվացման, ամբիոնների հետ կապի ամրապնդման հարցերում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի և լրատվության բաժին, ԱՔԲ, ֆակուլտետի դեկաններ, ՄԿԾ-ների պատասխանատուներ | Համագործակցային ակտիվ կապեր ՀՀ գիտական, կրթական հաստատություններ ի հետ, կնքված համագործակցության հուշագրերի, պայմանագրերի առկայություն | Ֆինանսական հավելյալ միջոցներ | Ոչ բավարար շահադրդում արտաքին և ներքին շահակիցների շրջանում | Գործընկեր բուհերի հետ համատեղ իրականացված միջազգային գիտաժողովներ: Գործընթացից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |
| 6. | Միջազգային համագործակցությամբ մագիստրոսական թեզերի համաղեկավարում: | 5.2.Օտարերկրյա գործընկեր համալսարանների և կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա մագիստրոսական թեզերի համաղեկավարում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ֆակուլտետների դեկաններ, ՄԿԾ-ների պատասխանատուներ | Համագործակցային ակտիվ կապեր ՀՀ գիտական, կրթական հաստատություններ ի հետ, կնքված համագործակցության հուշագրերի, պայմանագրերի առկայություն | Ֆինանսական հավելյալ միջոցներ | Ոչ բավարար շահադրդում արտաքին շահակիցների շրջանում | Օտարերկրյա գործընկեր համալսարանների դասախոսների հետ համատեղ ղեկավարած մագիստրոսական թեզեր: Գործընթացից շահակիցների բավարար վածության աստիճանի աճ: |
| 7. | ԳՊՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի նոր հայեցակարգի մշակում և գործարկում՝ բարելավելով ԳՊՀ գործունեության մասին հանրային իրազեկման մեխանիզմները: | 7.1.ԳՊՀ-ի՝ հասարակայնության հետ կապերի նոր հայեցակարգի մշակում՝ արտաքին շահակիցների կարիքների հաշվառմամբ: 7.2.ԳՊՀ պաշտոնական կայքէջում ստորաբաժանումների գործունեության մասին տեղեկատվության շարունակաբար համալրում և թարմացում՝ ԳՊՀ-ի | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ԱՔԲ, ՈԱԲ, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի, իրավական ակտերի առկայություն | Լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք չկա | Մարտահրավերներ չկան | Ազնիվ կրթական և աշխատանքային միջավայրից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գործունեության հաշվետվողականությունն ու թափանցիկությունը բարձրացնելու նպատակում: | | խորհուրդներ, ՈՒԽ, ՈՒԳԸ | | | | |
| V. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ | | | | | | | | |
| 1. | Հակակոռուպցիոն ծրագրի գործողությունների պլանի մշակում և իրականացում: | 1.1.«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների պլաններում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գերակա ուղղության իրականացման համար սահմանել հստակ ժամանակացույց, գնահատման արդյունավետության ցուցիչներ՝ ըստ պատասխանատուների: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՌԱԲ, ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի, իրավական ակտերի առկայություն | Լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք չկա | Մարտահրավերներ չկան | Համալսարանի կառավարման ձևերից և վարչարարությունից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |
| 2. | Հակակոռուպցիոն ծրագրի իրականացման մշտադիտարկման պլանի մշակում և գործարկում: | 2.1.«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի 2023-2027թթ. զարգացման ռազմավարական ծրագրի միջնաժամկետ, կարճաժամկետ գործողությունների պլաններում հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գերակա ուղղության իրականացման համար սահմանված գնահատման արդյունավետության ցուցիչների մշտադիտարկում, կատարողականի արդյունավետության ցուցիչների գնահատում: | 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՌԱԲ, ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի, իրավական ակտերի առկայություն | Լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք չկա | Մարտահրավերներ չկան | Համալսարանի կառավարման ձևերից և վարչարարությունից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ: |
| 3. | Գործողությունների պլաններում արտացոլված որակական և քանակական ցուցիչների ճշգրտությունն ապահովելու նպատակով ընդհանուր մոտեցման և մեխանիզմների մշակում և գործարկում: Մշտադիտարկել գնահատման ցուցիչների չափելիության աստիճանը: | 3.1.Շարունակաբար իրականացնել ԳՊՀ ՌԾ հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գերակա ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունավետությունից շահակիցների բավարարվածության գնահատումներ, կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների պլանների իրականացման մշտադիտարկման պլանների միջոցով վերահսկել արդյունավետության ցուցիչների կատարողականը, վերլուծել դրանցից շեղումները, դրանց պատճառները: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՌԱԲ, ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի, իրավական ակտերի առկայություն | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | Մարտահրավերներ չկան | Ազնիվ կրթական և աշխատանքային միջավայրից շահակիցների բավարարվածության աստիճանի աճ |
| 4. | Կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմների կատարելագործում և | 4.1. ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի դրույթները, կոռուպցիոն ռիսկերի վերհանման, կանխարգելման և վերահսկման մեխանիզմները մշտապես պահել բուհի առանցքային կարևորության | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՌԱԲ, | Համապատասխան փորձի, ձևավորված մշակույթի, իրավական | Լրացուցիչ ռեսուրսներ չեն պահանջվում | ԳՊՀ արտաքին և ներքին շահակիցների ոչ բավարար շահադրդումը | Ազնիվ կրթական և աշխատանքային միջավայրից շահակիցնե |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | կիրառում, ԳՊՀ բարեվարքության կանոնների վերանայում և համալրում: | հարցերի շարքում, հետևողականորեն պահպանել ԳՊՀ բարեվարքության կանոնները:<br>4.2.Ապահովել բուհի գործունեության բոլոր ոլորտների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:<br>Համալսարանի որակի ապահովման բաժնի կողմից կոռուպցիոն ռիսկերի բացահայտմանը միտված<br>ներքին և արտաքին շահակիցների շրջանում պարբերաբար իրականացնել անանուն հարցումներ, հրապարակել արդյունքները: | | ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | ակտերի առկայություն | | | րի բավարար վածության աստիճանի աճ |
| 5. | Իրավագիության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացման ծրագրերի մշակում և իրականացում: | 5.1 Իրավագիության բաժնի դասախոսների և ուսանողների միջոցով աշակերտների շրջանում իրավագիտակցության բարձրացմանը միտված բաց դաս-քննարկումների կազմակերպում, համատեղ միջոցառումների իրականացում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | Համագործակցային արդյունավետ կապեր մարզի գրեթե բոլոր դպրոցների հետ, կնքված պայմանագրերի առկայություն | Լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք չկա | Ոչ բավարար շահադրդում արտաքին և ներքին շահակիցների շրջանում | Շահակիցների իրավագիտակցության բարձրացում |
| 6. | ԳՊՀ-ում իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձրացմանը միտված բաց դասախոսությունների և հանրային քննարկումների պարբերաբար կազմակերպում: | 6.1.Իրավագիության բաժնի դասախոսների միջոցով մարզում Արցախից տեղահանված բնակիչների, այլ թիրախային խմբերի շրջանում իրավագիտակցության բարձրացմանը միտված հանրային քննարկումների, հանդիպումների կազմակերպում:<br>ԳՊՀ իրավաբանական կլինիկայում մարդու իրավունքների վերաբերյալ տարբեր քննարկումների, վերապատրաստումների կազմակերպում, «Իրավունք բոլորի համար» ծրագրի շրջանակում աշակերտների հետ համատեղ միջոցառումների իրականացում: | Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում | Ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ՄԿԾ ղեկավարներ, ֆակուլտետների խորհուրդներ, ՈԱԲ, ԱՔԲ, ՈՒԽ, ՈՒԳԸ | Համագործակցային արդյունավետ կապեր մարզի գրեթե բոլոր դպրոցների հետ, կնքված պայմանագրերի առկայություն | Լրացուցիչ ֆինանսական միջոցների կարիք չկա | Ոչ բավարար շահադրդում արտաքին և ներքին շահակիցների շրջանում | Շահակիցների իրավագիտակցության բարձրացում |

Ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Նելլի Կուտուզյան